

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Մանրակ Գուն  
Վարդի Աթոռաբա

Առաջնորդ

## ԴՐՈՅԱԿԱՆ ԳԵՎԱՐՎԵ

# Մարքս Գուն Վարչել Ազգական

ԱՐԱԿՈՆ

406



1990-1991

四

9-382

ՀԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱԿԱԴԵՄԻԱ-ՊՐՊՐԵՆՏԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒՅՆԱԳՐԻ ԲԱԺԻՆ  
ԹՐԱՆՍԿՐԻՊՑԻ 1951

Նկարիչ  
Ա. ՏԻՐԱՑՈՒԲԱՆ

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հրատարակելով մեր միջնագույշան առօկազիւներ Մխիթար Գևիկ և Վարդան Այգելցու ընթիր առակները, Պետրասն առաջին հերին ի նկատի է ունեցել միջնակարգ դպրոցիների միջին և բարձր դասաւաների աշակերտության պահանջները, ինչպես նաև մասսայական ընթեցողների ցանկաթյունը:

Առակները նոյածականաւար նույնացիներ և ալ բուրգման-վաճ ժումանակից գրական հայեւենով:

Մ. ԳՕՇ, Վ. ԱԻԳԵԿՅԻ  
ԲԱՇՆԻ

(На армянском языке)  
Անդրքան, Երևան, 1951

Անդրանիկ





†

\* 1 \*

Մի անգամ աստղերը հավաքվեցին  
իմի, և նրանցից ամենածերերն ասացին.  
— Մենք բազում ենք ու շատ Աւրեմն ին-  
չու չենք կարողանում լուսավորել ցերեկն  
ու գիշերը արեղակի և լուսնի նման:

— Որովհետեւ միաբանությամբ չենք  
վարվում, — պատասխանեց մեկը:

Եվ որոշեցին նախ հալածել ու փախցնել  
արեգակին, բայց երբ լուսինը ծագեց,  
հաղթվելով նրանից՝ աստղերը ասացին:

Եթե մենք լուսնի լույսից այսպես  
աղասացանք, ապա ի՞նչ կլինենք, երբ արել  
ձագիռ

Զգջացին ասազերը և խոստվանեցին  
իրենց ուստան թյունը:



ՀԱՅՐԵՆԻ

2.

**Մ**ի անմիտ մարդ հունապի ծառը  
դժնիկ կարծելով՝ հարված տվեց նրան:

Ծառը զայրացավ և ասաց.

— Ով անազորույն, ծառը իր պաղից  
աղետք է ճանաչել և ոչ թե տեսրից:





3.

**Ս**ԱՆՅՆԻՆ և թղենին միոյանց հետ  
սեր անել կամեցան և քաղցրությամբ հա-  
մեմատվեցին. բայց նուան թթվությունից  
խորշեց թղենին, և լուծվեց նրանց դա-  
շինքը:



4.

**Պ**ՈՎՅ դորահրբ խորհուրդ անելով  
տուացին.

— Ինչու հնք զեղնած ու փորներս ու-  
սուծ խեղգվում ջրի մեջ, գուրս դանք ցա-  
մաք ու կյանք վարենք, ինչպես ուրիշ-  
ները:

**Մի ծեր գորս տուաց:**

— Հայրս պատվիրել է ինձ, որ ծովի  
ապաստանը չթողնեմ, որպիհետև բնությամբ  
վախկու ենք. գուցե դուրս դանք ու վա-

խենալով ետ դառնանք և մեր վախկոսությունն ուրիշներին հայտնի դարձնենք:

Բայց զորտերը չլսեցին ծերունուն ու դուրս եկան, սակայն ոտնաձայն լսելով՝ փախան խսկույն ու ծովը սուզվեցին դարձյուր:




5.

**Ա** ԱՅՈՒՆԻ ոտքը կոտրվեց. Նա սկսեց տրտնջալ բոլոր կենդանիների վրա և ասաց.

— Դուք իմ հարկատուներն եք, որովհետեւ գաղանների իշխանն եմ ես, ինչու ինձ համար զոհաբերություններ չեք անում, որ առողջանամ:

— Այս պատճառով, — պատասխանեցին կենդանիները, — որ մենք քեզանից պաշտ-

պանություն չտեսանք ոչ արջի ձեռքից,  
ոչ գայլի և ոչ էլ գաղանների ձեռքից և  
մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ:  
Մենք աստծուն պետք է զոհաբերություն  
անենք, որ այդպիսի փորձանքի բերեց  
քեզ:



## 6.

— **Բ**ՄԱՍՅԱԽՆԵՐԻՑ մեկը հարցում ա-  
րավ ծառերին և ասաց.

— Ի՞նչն է պատճառը, որ դուք ինչ-  
քան բարձրանում եք, այնքան էլ խորը  
արմատներ էք դցում:

**Ե**վ ծառերը այսպես պատասխանեցին.

— Ինքդ իմաստուն լինելով, ինչպես է  
որ չգիտես, որ մենք չենք կարող այսքան  
ճյուղեր կրելով մեզ վրա, դիմանալ հող-  
մերի բռնությանը, եթե խորը արմատներ

Հգցենք. Տեսնում ես մեր եղբայր հաճարի  
և փիծի ծառերը, որոնք թեպետ և բազմա-  
ճուղ չեն, բայց գարձյալ քամիներին  
ընդդիմադրել չեն կարող, որովհետեւ խորը  
արմատներ չունեն:



3830




7.

**ՊԱՏԿԻ** տոնին հավատացյալները հա-  
ղորդվելու եկան: Մի հովի էլ համոզեցին,  
որ նա ևս հաղորդվի, բայց հովիվը երբ  
հաղորդությունը տեսավ, փախավ, ասելով:  
«Ոչ ճաշ է, որ ուտեմ, և ոչ ընթրիք»:  
Աւ չհավանելով՝ թողեց ու գնաց:

Առաջին Եղիշեական Պարբուն  
ՊԵՏԱԿԱՆ ԴԱՅԱՐԱԿԱՆ  
ԳՐԱԴՐԱՆՑ

9383





5.

— ԱԿՆՑԻՆ մեղադրում եր իրենց թաղավորը, ասելով, թե ինչու եք ուտում ձեզանից մանր կենդանիներին և եվ ձկները համարձակվելով ասացին. «Քեզանից ենք սովորում, որովհետեւ շատերը գալիս են քեզ երկը կը պազելու, և դու, կուլ տալով նբանց, կերակուր ես գործնում քեզ համար. Ուստի և մենք քեզանից սովորելով, հանդինում ենք»:



9.

Ա ԱՅՈՒԹԸ, արջը և դայլը միասին ասացին մի անգամ.

— Մենք ինչու ենք հում ուտում մեր որսը. Մարդկանցից մեկին բռնենք, որ, իրենց օրենքի համաձայն, կերակուր պատրաստի մեզ համար մեր որսից:

Եվ բռնեցին մեկին ու կարգեցին խոհաբար:

Մարդը նեղվելով նրանց ձեռքի տակ մնալուց, հնար մտածեց նրանցից ազատվելու, ձեղքեց մի մեծ գերան և նրա ամեն

կողմում սեպեր դնելով, ասաց առյուծին  
ու մյուսներին.

— Օգնեցեք ինձ ճեղքելու այս փայտը:  
Դրեք ձեր ձեռքերը ճեղքվածի մեջ և ձգե-  
ցեք:


Երբ նրանք դրին ձեռքերը, մարդը դուրս  
քաշեց սեպերը. Գազանները մացին կաշ-  
կանդված։ Այդ ժամանակ մարդը կացինն  
առավ և ասաց.

— Նախ առյուծից սկսենք!  
Ասաց և ջարդեց բոլորին։



10.

Մ ի անգամ վար անելիս եզր փա-  
խավ լծի տակից, բայց մշակը բռնելով,  
նրան կալը բերեց. այստեղից էլ փախչե-  
լով, բռնեց բերեց ու սայլին լծեց։ Սայլից  
էլ փախավ, ու բերեց շատ բանի լծեց, վեր-  
ջապես երբ եզր տեսավ, որ փախուստ տախն  
անհնար է, ճնազանդվեց և թողեց իր  
փախչելու սովորությունը։





11.

Արջի փորը ցավեց, դեղ հարցրեց  
աղվեսից, և սա ասաց.

— Եի բարեպաշտ մարդ դըռ գեղն տնի,  
կերթաս նրա մոտ և նա մեղք կտու, որը  
շատ օգուտ է քեզ:

Արջը ճառվառ ընկավ և երբ մոտեցավ  
գյուղին, շները հարսծելով փախցրին նրան,  
և նա սկսեց մեղադրել աղվեսին:

Աղվեսն ասաց.

— Այն մարդը, որ քեզ ոչ շներից ազա-  
տեց և ոչ էլ դեղ տվեց, տղետ է և օրենքից

անտեղյակ: Արի քեզ տանեմ մի կրոնա-  
վորի մոտ, որը հմուտ է աստվածաբանու-  
թյան մեջ և բանիմաց է:

Երբ կրոնավորը տեսավ արջին ու աղ-  
վեսին, սկսեց նախատել նրանց և մերժել:  
Աղվեսը արջին ցույց տվեց մեղվանոցի  
մուտքը, ուր մտավ արջն անմիջապես, կե-  
րավ մի փեթակ և մեկն էլ վերցնելով  
ճառվառ ընկավ: Կրոնավորն սկսեց անիծել  
աղվեսին, որպես վնասի պատճառի:

Աղվեսն ասաց.

— Ես մեղավոր չեմ, որ արջը տմարդու-  
թյուն արավ: Մեղքը քոնն է, որ դեղի հա-  
մար չտվիր մեղքը, այլ՝ փորի:






12.

**Հ**ԱՅՆ ընթանալիս շարժվում էին ոչ-  
խարհների գծակիները:


Այծերը նոխանձից դրդված սկսեցին  
բամբառել նրանց և ասացին.  
— Ինչու մեզ նմտն ողարկեշտաթյում  
չեք քույլում:



13.

**Ա** ԹՅՈՒՆԸ բորենուն ըռնեց գողու-  
թյան մեջ, և բորենին առաց.

— Ես մեռածներին եմ ուտում, որով-  
հետեւ կենդանիներին հաղթել չեմ կարո-  
ղանում, իսկ զու ողջ-ողջ ես հոշոտում,  
որպինեան հզոր ես ու հաղթող:





14.

ՓիզՆ իր որդուն ավեց Պլատոնի մռու,  
որ իմաստությունն առվորիւ Պլատոնը նախ  
սկսեց սովորեցնել նրան լսարանում չու-  
քելը, բայց նա չէր կարողանում, ապա  
առաց նրան՝ զլուխոդ խոնարհիր, այդ էլ  
չկարողացավ:

Պլատոնն այն ժամ նրան հորը վերա-  
գործեց և ասաց.

— Որդիդ արժանի է թագավորի պա-

լատում լինելու՝ միշտ ոտքի վրա կանգ-  
նած, և ոչ իմ լսարանում, որովհետեւ ոչ  
նատել կարող է, ոչ գլուխ խոնարհել:





15.

Պ ԱՎՏԻՆ իւփեց իր ինամողը, Աւգ-  
տը բարկանալով՝ ասաց:

— Մի ծեծիր ինձ, երբ տրտում եմ ես,  
ապա թե ոչ կմեռնես իմ ձեռքով:

— Իսկ ի՞նչն է քո տրտմության նշանը,  
որ իմանամ և չծեծեմ քեզ:

— Երբ կտեսնես, — ասաց ուզար, — որ  
իմ ստորին շուրթը կախ է ընկած, և ոտքս  
քայլելիս ձայն չի հանում, իմացիր, որ  
տրտում եմ ես:

— Ես ինչպես իմանամ, — ասաց ուզտա-  
պանը, — երբ շարունակ այդպես է՝ ստորին  
շուրթունքով կախված և քայլելիս էլ ոտքիդ  
ձայնը չի լսվում:






16.

Փ ԱԼԻՋԱՆԴՐԸ մի անդամ բանախոսություն արտավ մարմնական առողջության վրա, ասելով, որ եթե մարդ դպրոյշ լինի ուտելու և խնելու մեջ, բժիշկներին դիմելու կարիք չի ունենաւ. Մի մարդ լսելով նրա բանախոսությունը, ոչ ուտում էր և ոչ խմում, որից չարաչար հիվանդացավ և հանդիմանում էր Գալիանոսին, որը լսելով ասաց.

— Մի՛թե չգիտես դու, ով անմիտ, որ մենք մեր ընության արարիչը չենք, այլ օգնականը. և դու ինչու չհասկացար ու այնպես չվարվեցիր:





17.

**ՊԱՅԼՆ** սպասում էր, որ այծ յամը ննջի,  
որպեսզի բռնի նրան և ուտի: Բայց այծ յամն  
իմանալով նրա միաքը, չէր ննջում շատ  
օրեր, մինչև որ գայլը թմրելով՝ նիրհեց:

Այն ժամանակ եկավ առյուծը և կերավ  
գայլին:




18.

— **ՊԱՅԼԱՆ** թախանձում էր ողնուն.  
— Որդուդ տուր ինձ հոդեղավակ, և  
դառնանք բարեկամ:

Եվ երբ բաղում թախանձանքից հետո  
ստացավ ուզածը, ասաց.

— Որովհետեւ գմվարահամբույր է որդիդ,  
ուստի մերկացրու նրան վշերից, որպեսզի  
հեշտ լինի դրկել նրան ու գզվեր  
Ողնին խարվեց և, մերկացնելով որդուն

փշերից, ավեց կատվին, որը կերավ իս-  
կույն, իսկ ողնին ճեռացավ կսկծալից լաց  
ու կոծով:



19.

¶ ԲՈՅ ժամանակ բազեի ճանկերից ա-  
զատվեց հավբալի ձագը, և բազեն ասաց.  
«Թող դա զոհ լինի աստծուն». Հավբալի ձագը  
ծաղրելով նրան՝ ասաց. «Ինչ որ ձեռքովդ ես  
տալիս, այն է զոհ»:





20.

**Ս**ԻԾՔ տեսավ ջայլամին, որը մեծ-մեծ  
ձռ էր ածում, և ուզեց պատճառն իմանար  
Ջայլամը պատասխանեց. «Կրակ հմ կուլտա-  
լիս, այդ է պատճառը, որ մեծ-մեծ ձվեր եմ  
ածում ես»։ Ծխոը հավատալով, կրակ կուլ-  
տվեց և մեռավ, չմտածելով, որ մեծ-մեծ ձվեր  
ածելու պատճառը Ջայլամի մեծությունն էր»



21.

**Զ**ԱՏԵՔԻ տոնին բոլոր թռչունները  
գնացին քահանայի մոտ և, խոստովան-  
վերով, հաղորդվում էին։ Նրանց հետ գնա-  
ցին նաև ոսկու և հողամաղը։


— Տեր հայր, — ասացին նրանք, — մենք  
խիզճ ասած բանը չունենք, մենք մկներ  
ու զորտեր որսացինք ու կերանք։

Քահանան մերժեց հաղորդություն տալ  
սակաին և հողամաղին, պիղծ կոչելով  
նրանց։

Նբանք զնացին, ոռւրք ձագեր որսացին  
և ըերին տվին քահանային, որն տսաց.

— Թուք առաջին անդամ չխմացաք խոս-  
ապահնվել, որավետե մկներն ու զորտերը  
ծերացած ու փետրաթափ թոշուններ են:

Այս տոելով՝ քահանան արգարացրեց  
նրանց և հաղորդեց:



22.

Ա ՆՅԵՐ, անսառում սովորաբար միշտ  
ազաղտկում է, մանավանդ կենդանիներ  
ուեսնելիու երբ ձաղը կամեցափ դրա պատ-  
ճառն իմանալ մայր տնծեղը պատասխանեց.  
«Որովհեսքի թշնամիներս ինձ միշտ արթան  
ուեսնեն և չմտածեն վրաս հարձակիել՝  
որսալու նպատակով»:





23.

**Ճ ԱՅԵԿԸ** սագին աղաչում էր և ասում.  
— Ես սեադեմ լինելով արհամարհված  
եմ բոլորից, իսկ զու սպիտակ ես ու պայ-  
ծառ, ինդրում եմ ինձ սովորեցնես, որ  
քեզ պես սպիտակեմ:


— Շատ լավ,— ասաց սագը, — միայն թե  
ինձ պես միշտ լվացվիր ջրով:

Ճայեկը լսեց սագի խորհուրդը, բայց  
լվացվելիս ընկնում էր նրա սե փետուրը  
և գարձյալ նույն գույնով գալիս էր մեկ  
ուրիշը:

Ճայեկը կրկին դնաց սագի մոտ ու աղա-  
չեց, և սագն ասաց նրան.

— Լվացվելու հետ միասին իմ լեզուն էլ  
պետք է սովորես, որ կարողանաս ինձ  
նման լիներ

Ճայեկն հանձն չառավ մոռանալ իր լե-  
զուն և մնաց նույն սեադեմը:





24.

**Ճ**ՆՉԱՌԻԿՆԵՐԻ երամով զնացին առագիլի մոտ և աղաչերով ասացին նրան։

— Թույլ տուր մեզ ձագեր հանելու քո ըույնի մեջ և պաշտպանիր մեր ձագերն օձերից։

— Ի՞նձ ի՞նչ կանեք, — ասաց արագիլը, — որ կատարեմ ձեր կամքը։

— Կաղոթենք, — պատասխանեցին ճընճղուկները, — որ ձեր ձագերը միշտ առողջ մնան և զերծ՝ վեառակար օդից ու եղանակից։

Եվ արագիլը տեղ տվեց նրանց։  
Երբ ճնճղուկները ձագ հանեցին, օձը սողաց գեղի ըույնը նրանց ձագերն ոււաերու։ Արտղին սպանեց այդ օձին և մանէր զալիս ամենուրեք, որ ոչնչացնի բոլոր օձերին՝ ճնճղուկների ձագերին փրկելու համար։

Առակս ուսուցանում է կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ որ աղատություն վայելին նրանք։





25.

**Ս**ԻՐԱՄԱՐԴՎԸ իր գեղեցկությունն ամենքին ցուցադրելով՝ զովեստ էր ստանում. և նա մտածեց թագավոր դառնար իմաստուններից ոմանք խրատեցին՝ չխարվել, ասելով, թե ազգով պետք է թագավոր լինել: Բայց սիրամարդը շէր ուզում լսել նրանց և ցանկանում էր անպատճառ հասնել իր նպատակին: Թաշունների թագավորը լսելով այդ մասին, եկագ և կոտորեց նրա ձագերին և ազգատոհմը: Շատերն

էլ թևերն ու փետուրները դուրս քաշելով՝ մերկացրին նրան: Այսպիսով, սիրամարդը ոչ միայն թագավոր չդարձավ, այլի զրկվեց իր գեղեցկությունից:

Այսպես ահա, նրանք, ովքեր հրապուրվելով ցանկանում են հասնել անկարելիին, ոչ միայն ձեռք չեն բերում այն, այլև կորցնում են իրենց ունեցածը:



ՏԵՇԵՑՆԵՐՀԱՅՐԵՐ



26.

Ա Վ Ա լ լ ա լ ի ս պ ր ու մ է թ մ բ ջ յ ու ն ի ը ու յ ն ր  
և լ ե զ վ ով հ ա ս վ ա ք ե լ ով ն ր ա ն ց՝ ու տ ու մ :

Մ բ ջ յ ու ն ը հ ն ա ր է թ մ տ ա ծ ու մ ս պ ա ն ե ւ  
ր ու մ բ ջ ի ն ո

Գ ն ու մ է ն ո տ պ ի ծ ա կ ի , զ ա ռ ե խ ի , շ ն ա ձ ա ն ձ ի ,  
բ ր ե տ ի և ա յ լ ս ր ա ն ց ն մ ա ն ն ե ր ի մ ո տ և  
տ ղ ա չ ու մ օ գ ն ե լ ա ղ գ ա ս ի բ ր ա բ ա ր ո ւ ն ր ա ք ,  
ց ա վ ա կ ց ե լ ով ի ր ե ն ց ա ղ գ ա կ ի ց մ բ ջ յ ու ն ի ն ,  
խ փ ու մ է ն ա ր ջ ի ա չ ք ի ն և ա կ ա ն ջ ն ե ր ի ն ,  
ո ր ը դ լ ո ւ խ ը զ ա ր կ ու մ է ք ա ր ի ն և վ ե ր ք է

ս տ ա ն ո ւ մ : Վ ե ր ք ը ն ե խ ու մ է , ո ր ի ց և ա ռ ա շ  
ջ ա ն ո ւ մ է ն ա ր գ ե ր : Ա ր ջ ը ց ա վ ի ս տ ա կ ու -  
թ յ ու ն ի ց զ ո չ ու մ է բ ե ր ա ն ա ք ա ց : Ա ր գ ե ր ը  
ն ր ա ս ր ո վ ա յ ն ը մ ա ն ե ր ո վ ի խ ո ց ո ւ մ է ն ա  
ա ղ ի ք ն ե ր ը , ո ր ի ց ա ր ջ ը տ ա ն ջ ա ն ա ր և ց ա  
վ ի ց ս տ ի պ վ ա ծ զ ի մ ո ւ մ է զ ե զ ի ջ ր ի հ ո ս ա ն -  
ք ը և չ ա փ ի ց ա կ ե լ ի խ ո ր ը մ ա ն ե ր ո վ ի խ ե ղ գ -  
գ ո ւ մ է :





27.

**Պ**ԱԶԻԿՆԵՐԸ լույսին նայել չեն կառող, մանում են քարերի ճեղքը և կամ պատերի խորշերը, և, որովհետեւ գարշահոս են ու վատատես, ցերեկը զունդ ու կծիկ են լինում և զիշերը հարձակվում:


Այդպես են բանսարկուներն ու ավազակները, որոնք արդարության լույսից փախչելով՝ սիրում են խավարը:



28.

**Պ**ԱՆՁԱԿՈՒՄԸ ու երկաթաղործը միմյանց խնամի գառնալու ժամանակ վիճեցին. յուրաքանչյուրն իր արհեստն էր գովարանում մեծարարառ, և նրանց մեջ հակառակություն ընկալ. դնացին ծերերի տայանը: Ծերունիներն առացին, թե հասարակաց օղտակարը պատվական է:





29.

X

**Ո** Սկի՞ն թաղավորելիս պահանջում էր,  
որ բոլոր նյութերը երկրպագեն իրեն, Նա  
թագավոր էր կոչում իրեն, որովհետեւ թա-  
գավորի պատկեր էր եղել, և դրանով ամ-  
բարտավանում էր արծաթաղործների և  
ուրիշների վրա ևս Բոլորը եկան երկրպա-  
գելու, բայց ցորենը չեկավ, ասելով. «Թող  
առաջ ինքը ոսկին, զա ինձ երկրպագելու»:



30.

V

**Ս** օսի ծառի մոտ երկրպագործները  
ջրում էին բամբակի արտը:  
Նրանք պատվիրում էին միմյանց զդու-  
շանալ բամբակենու ծառերը կոխ տալուց:  
Սոսին բարկացավ, որ ծառ են կոչում  
բամբակենուն և ասաց.

— Ինչպես կարող է դա ծառ կոչվել և  
համանուն լինել ինձ, որ հաստ եմ այս-  
քան ու բարձր և շատ տեղ եմ բռնում:

Եվ բամբակենին անվախ՝ արձակ ու հա-  
յարձակ պատասխանեց.

— Դու բարձր ես, արգարի, ու հտատ,  
սակայն անօպուտո, ոչ շինության համար  
ես ոլխանի և ոչ պտղաբերությամբ՝ զո-  
վելի, այրիլու համար էլ անպետք ես. Այլ  
միտյն թանձր ստվեր ունես, որի համար  
ավելի շատ պարագում են քեզ, քան թե  
զովում: Իսկ ես թեհ փոքր եմ ու տկար,  
բայց բազմաշահ եմ և օգտակար բոլոր  
մարդկանց համար և պահպանելու, և քա-  
ղելու, և զործելու ժամանակ, և վերջում  
էլ գառնում եմ հագուստ, ինչպես ոչխոր-  
ների բուրդը, կոտավատի վուշը և շերամի  
մետաքսը: Միհչգեռ գու դըանցից ոչ մեկը  
չունեռ, բացի միայն խողակից:

Եվ այս հանգիմանություններից հետո  
սոսին լուց:



31.

Ե Յ Ե զնաց սար կրոնավոր լիներու,  
բայց վախենալով տեղի դառնությունից  
ու զժվարություններից, մանավանդ որ  
խրառում էին, թե ծույլ չպետք է լինի,  
վախազ այնաեղից, ասելով.

— Խառան, խառան...

Այսինքն թե առք է Խառանը, որտեղից  
եկել էր նա կրոնավոր լինելու:





քահանան, — ես հենց խաղաղություն պահպանելու համար ևմ տանջում քեզ, որովհետեւ դու չես սիրում խաղաղությունը:



32.

Ա ՎԱԶԱԿԻԾ մի քահանայի բռնելով՝  
կամենում էր սպանել նրան, Քահանան ուժ  
առավ, հաղթուհարեց ավագակին և, ինչպես  
պետք էր, սկսեց տանջել նրան:

Ավագակն ազատում էր և ասում.

— Չէ՞ որ քահանա ես դու և միշտ ասում  
ես «խաղաղություն ամենեցուն» ու սրա  
նման շատ բաներ, ուրիշն ինչու ես տանջում  
ու չարչարում ինձ:

— Ո՞վ դու չարագործ, — պատասխանեց




33.

ԵՐԱԲՈՒՅՈՒ կար շատ բարձր և անժամանի մի լեռ։ Մարդիկ կամեցան ընակություն հաստատել նրա վրա, որովհետեւ լի էր նա ամենայն բարիքով։ Սակայն շատ էր գժվարին նրա վրա բարձրանալը, թե պեսև ուներ բազում ճանապարհներ նրանք, ովքեր նրա վրա բարձրանալու ժամանակ կանգ տուան հանգստանալու, սայթաքեցին և ցած գլորվելով հասան մինչեւ հատակը, իսկ ովքեր շուգեցին դադար առնել, այլ

դավագանի օգնությամբ աշխատեցին շարունակել վերելքը, բարձրացան լեռոն վրա և հանդիստ կյանք վայելեցին։

Այսպես թուրակազմ անարիները մնում են կես ճանապարհին ու կորչում, իսկ հաստատակամները, համբերությունն իրենց նեցուկ ունենալով՝ վեր են բարձրանում ու հասնում նպատակին։



# Վարդու Ազգակիր





## ԳԱՐՈՒ ՀԱՇԻԿ

Յ ք մարդ կալից գրաստով զարի էր  
կրում տուն։ Եվ քուռակը մոր հետ զնում  
էր ու ետ զառնում։ Իսկ տանը, ուր կրում  
էին զարին, մի խոզ կար կապած, որին  
զիրացնում էին։ Քարին նրանից անպա-  
կաս էր, որպեսզի ուտի և զիրանա։ Քուռակն  
տաց մորը.

— Ինչու համար այն խոզը առանց աշ-  
խատանքի ուտում է զարին, որ մենք  
կրում ենք մեծ զժվարությամբ, իսկ մեզ,  
որ չարչարվում ենք, օրը մի անգամ են  
զարի տալիս։ Մայրն ասաց.

— Հսիր, որդյակ, մի շաբաթ ևս համբերիր, ես քեզ պատասխան կտամ ու քո աշխով կտեսնես:

Մի շաբաթ հետո էշը և քուռակը բեռով տուն էին գալիս: Քուռակը մորից առաջ էր գնում և լսեց ուժեղ խռնչոցի ձայն, որով հետեւ խոզը մարթում էին: Քուռակը խրանեց և ետ փախավ զեպի մայրը: Մայրն ասաց.

— Ի՞նչ եղավ քեզ, որդյակ, որ սոսկում ես, մի վախենար խոզից, որովհետեւ նրանից զարու հաշիվն են ուզում:

Դարձյալ եկան կալը՝ գարի կրելու, եվ երբ բարձված վերադարձան առւն, քուռակը բարձրացնելով ստքի սմբակը, մորն ասաց.

— Ով մայր, տես թե ստքիս չի՞ փակչել զարու մի հատ, որ ինձնից էլ հաշիվ ուզեն, ինչպես խոզից:



### ✓ԱՅԲԻ ԿԻՆԸ ԵՎ, ԻՐ ՈՐՅԻՆ


**Մ**ի այրի կին ուներ տաս այծ և մի որդի: Սմեն օր որդին այծերը տանում էր արոտ, և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ ու փոխ էր տալիս հարկաններին: Եվ որդին մորն ասաց, թե ինչնւ ես այդպես ջուր լցնում կաթի մեջ ու փոխ տալիս հարկաններին: Մայրն ասաց.

— Որդի, մեր կաթը քիչ է, նրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմեռը մեզ թացան լինի:

Իսկ մի օր, երբ սրդին այծերն արտա  
էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր  
ամպ, անձրև եկավ, հեղեղ եղավ և այծերը  
սրբեց լցրեց զետը: Արդին տուն եկավ  
արեսվ ու դատարկ, ձեռքին միտյն փայտը,  
Մայրն ասաց:

— Արդի, մեր են այծերը, և ինչու գու  
այսօր արեսվ եկար: Արդին ասաց:

— Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ  
խառնում էիր կաթին ու փոխ տալիս հա-  
րեաններին, հավաքվեց, հեղեղ դարձավ ու  
եկավ մեր այծերը տարավ, լցրեց զետը:



## ՄԻԱՅՆԱԿՑԱՑՆ ՈՒ ԳԱՄՓՈ ՇՈՒՆԸ

— **Վ**ի միայնակյաց բնակվում էր մի  
գյուղի մոտ: Նա սիրեց մի աղջիկ և եր-  
կար ժամանակ նրա հետ շնանում էր պոռ-  
նըկությամբ: Գյուղի տանուտերը ուներ  
մի գամփո շուն, որ խիստ պահող շուն էր  
և ամբողջ գյուղը պահում էր: Մի գիշեր  
միայնակյացն եկավ, որ շնանա այն կնոջ  
հետ: Գյուղի եղբին նրան հանդիսեց տա-  
նուտերի շունը և հարձակվեց նրա վրա,  
կծեց և արյունը ճապաղ արեց ու շատ

վերքեր հասցնելով ունեղելով՝ քշեց նրան։  
Միայնակյացը լալով և արյունաթաթախ  
մտավ խուցը, դուռը փակեց, զղջաց ու չոքեց  
աղոթքի։ Լաց եղավ և կուրծքը ծեծելով  
ասաց.

— Աստված, բազում ժամանակ է, որ  
շնացա ու չվախեցա քո գատաստանից և ոչ  
էլ դառն դժոխքից զարհուրեցի, բայց այս  
դիշեր զարհուրեցի մի զամփո շնից և չկա-  
րողացա շնություն անել։



### ԱՅԾԵՐ ԵՎ ԳԱՅԼԵՐ

+ **ՀԱՎԱՓՎԵՑԻՆ** այծերը միասին և  
պատգամ ուղարկեցին գայլերի աղղին ու  
ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաջո-  
խուզություն և ոչ թե խաղաղություն։  
Հավաքվեցին գայլերը և շատ ուրախացան,  
նամակով պատգամ ուղարկեցին այծերի  
ազգին, նաև անթիվ ընծաներ։ Եվ գրեցին  
այծերին.

**«Լսեցինք ձեր բարի խորհուրդը և դոհ-**

ենք ասածուց, որովհետեւ մեզ համար մեծ  
խնդություն է և խաղաղություն. նաև  
իմացնում ենք ձերդ իւստության, որ  
հոգիվն ու շներն են պատճառ և սկիզբ  
մեր խռովության և կռվի: Եվ եթե նըանց  
վերացնենք մեջտեղից, շուտով խաղաղու-  
թյուն կլինի»:

Լսեցին այծերը, հաստատեցին և սաս-  
ցին.

— Իրավացի են գայլերը, որ մեզ ոպա-  
նում են, որովհետեւ շները և հոգիվը նը-  
րանց հալածում են մեզնից:

Եվ այծերը վտարեցին շներին ու հոգ-  
ին և երդգեցին, որ հարյուր տարի մնան  
անխախտելի սիրով: Այծերը ցրվեցին լեռ-  
ներն ու գաշտերը և սկսեցին ուրախ լինել,  
ցնծալ ու խաղալ, որովհետեւ արածում էին  
լավ արոտներում, ուտում էին համեղ խո-  
տեր, խմում էին պաղ ջրեր, խնդում էին

ու վազվառմ, փառք տալով, որ հասոն լավ  
ժամանակի:

Գայլերը համբերեցին հարյուր օր, ապա  
հավաքվեցին դաս-դաս, ընկան այծերի վրա  
և կերան:





## ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻՉ

Մաղավոր շինեց գեղեցիկ գարսաս և կամեցավ զարդարել այսպիսի նկարներով, որոնց նմանը ոչ մի տեղ չէր եղել Ընտրեց երկու նկարիչների, մեկին տվեց մի պատը, մյուսին՝ մյուս պատը և նրանց միջև վարադույր քաշեց։ Երբ նկարիչներն ավարտեցին իրենց գործը, թագավորը եկավ ու տեսավ, որ մեկը նկարել էր գեղեցիկ պատկեր և շատ հավանեց։ Իսկ մյուսը ոչինչ չէր նկարել, նա պատը շատ

գեղեցիկ սարքել ու կոկել էր հայելուց ամելի լավ։ Երբ թագավորը տեսավ, որ չի նկարել այլ միայն կոկել է, զարմացավ ի ասաց.

— Դու Բնչ ես արել՝

Նա ասաց.

— Ես ցույց կտամ իմ գործը։

Եվ ապա վեր քաշեց միջի վարադույրը։ Երբ լույսը ծաղեց ու լուսավորեց կոկած պատը, այն ժամանակ միջնեց նկարագարդ պատը, որովհետեւ հայելու մեջ երեսում էին այն բոլոր նկարները, որ նկարված էին մյուս պատի վրա։ Եվ թագավորն ասաց.

— Այս մյուսից գեղեցիկ է։





— Այս, ես ծնում եմ մի կորյուն, բայց  
առյուծ եմ ծնում և ոչ քեզ նման աղ-  
վես

✓ Ս.ԹՅՈՒԾՆ ՈՒ Ա.ԳՎԵՍԸ

— Առյուծ կորյուն ծնեց։ Հավաք-  
վեցին կենդանիները կորյունին տեսնելու  
և ուրախանալու։ Աղվեսը եկավ և հանգեսի  
ժամանակ, բազմության մեջ, առյուծին  
նախատեց բարձրաձայն ու անարգեց, թե  
այդ է քո զորությունը, որ ծնում ես  
միայն մի կորյուն և ոչ բազմաթիվ։  
Առյուծը հանդարտաբար պատասխանեց.





## ԻՄԱՍՏՈՒՆ ԳԱՏԱՎՈՐԸ

**Ա**թ մարդ ուներ չար կին։ Մի անգամ կինը կռվեց նրա հետ ու ասաց.

— Կարծում ես թե քո երեք որդիները քեզնից են։ Մեկն է քեզնից, իսկ երկուսը բիճ են։ Նա հարցրեց, թե մըն է իմը, և կինը չասաց։ Երբ հայրը մեռնում էր, ասաց.

— Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ որդուն։  
Եղբայրները կռվում էին իրար հետ.

Ճեկն ասում էր, թե ես եմ հարազատ որդին, մյուսը՝ թե ես եմ։ Գնացին մի խմաստուն դատավորի մոտ։ Դատավորը հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից և նետ արձակել նրա վրա։ Ով հորը զարկեր նետով և նետը ծակեր հոր մարմինը, նա էր հարազատ որդին։ Եվ երկու որդիները զարկեցին հորը, իսկ ճշմարիտ որդին դանակը քաշեց, որ սպանի եղբայրներին, լաց եղափ դաւն արցունքներով և թաղեց հոր մարմինը։

Իմացան, որ նա էր հարազատ որդին և նրան տվին հայրենի կայքը։





## ԱՌՅՈՒԹԸ, ԳԱՅԼԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

**Ա**ՌՅՈՒԹԸ, գայլը և աղվեսը եղբայրացան ու որսի ելան։ Գտան մի խոյ, մի մաքի և մի գառ։ Ճաշի ժամին առյուծն ասաց գայլին, թե բաժանիր մեր մեջ այդ որսը։ Գայլն ասաց։

— Ո՞վ թագավոր, աստված արգեն բաժանել է. խոյը քեզ, մաքին ինձ և գառն աղվեսին։ Առյուծը բարկանալով ապտակ զարկեց գայլի ծնոտին։ Գայլի աչքերը դուրս թռան, և նա նստեց ու գառն լաց

եղավ։ Առյուծն ասաց աղվեսին, թե բաժանիր ոչխարները մեր մեջ։ Աղվեսն ասաց.

— Ո՞վ թագավոր, աստված արգեն բաժանել է. խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրամենքին, գառը քեզ՝ ընթրիքին։

Եվ առյուծն ասաց.

— Ո՞վ խորամանկ աղվես, քեզ ևվ սովորեցրեց այդպիս ճիշտ բաժանել։ Աղվեսն ասաց.

— Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան:





## Փ Ի Ն Ի

**Ս**ի թաղավոր մի որդի ուներ: Նա հրամայեց նայիպներին, թե ամեն օր ձեզնից մեկը թող տանի իմ որդուն և պատվիր ել տանում էին:

Մի օր մի նայիպ պատվելու եր տարել թաղավորի որդուն: Երեկոյան նրան տարավ թաղավորի առւնը և ինքը զբաց:

Թաղավորի որդին խիստ գինով էր: Նո-

հարբած դուրս եկավ ընկավ աղբանոցը և մեռավ:

Թաղավորը հրամայեց, թե իմ իշխանության ներքո ինչքան այդի կոմ' փակեք և կարասները կուրատեք: Այդպես արին:

Մի այրի կին մի որդի ուներ: Նա պահեց իր հնձանն ու զինին: Ամեն առավոտ ու երեկո հացի վրա երկու թոս գինի էր տալիս որդուն:

Այրի կնոջ որդին մի զիշեր դուրս եկավ, սպանեց թաղավորի առյուծին: Թաղավորն առավոտյան հրամայեց՝ եթե իմ առյուծին սպանողը զա և ինձ պատմի՞ նրան չեմ պատմի:

Եկան այրի կինը և նրա որդին:

Թաղավորը նրան հարցրեց, թե ինչպիս սպանեցիր առյուծին: Նա ասաց, թե զի-

շերով դուրս եկա, հանդիպեցի առյուծին  
և սպանեցիւ Մայրն ասաց, թե նրան գի-  
նով է մնուցել և պատմեց, թե ինչպես է  
զինով մնուցել:

Թաղափորը հրաման արձակեց, թե այգի  
անկեք և գինին այնպես խմեք, որ առյուծ  
սպանեք, ոչ թե աղբանոցում մեռնեք:




### ՄԻԱՄԻՏ ԳՐԱԼԵՐԸ

**Ե**ՐԿՈՒՅԻ գող բարձրացան մի մեծա-  
տան կտուր և կամեցան երգիկով վայր իջ-  
նել ու գողություն անեք Մեծատունն  
իմացավ, որ գողերը երգիկի մոտ են: Կինը  
մարդուն ասաց, թե այս բոլոր գանձերը,  
ուկին և կերպասը քեզ սրտեղից: Մեծա-  
տունն ասաց.

— Գնում էի գողության, մեծատուն  
մարդկանց երգիկով իջնում էի լուսնկա  
դիշերով, ինչպես այժմ, լուսնի շողերը եր-

զիկից ներս էին ընկնում, ինչպես այժմ:  
ես գրկում էի շողերի սյունը, վայր էի  
իջնում և այնպիսի մի բան էի ասում, որ  
ինչքան զեղեցիկ կերպաս կար այդ տանը,  
երեսում էր ինձ հապում էի լուսնի շո-  
ղերին և վեր բարձրանում։ Այս ամենն  
այդպես եմ վաստակեց

Երբ գողերն այդ բանը լսեցին, խիստ  
ուրախացան և հավատացին այս ցնորածիտ  
բանին ու լուսնի շողերը գրկելով երդիկից  
վայր ընկան ու ջարդվեցին։



ԽԾԽԱՆՔ ԵՎ ԱՅԻՒ ԿԻՆՔ

**Մ**ի իշխան կար խիստ չար և անի-  
րավություն քաղաքում ապրում էր նաև մի  
այրի կին։ Իշխանը հարկ պահանջելով նե-  
ղում էր նրան, խակ այրի կինը աղոթում  
էր, որ իշխանը երկար ու խաղաղ կյանք  
ունենա։ Գնացին ասացին իշխանին, թե  
քո չարության հսմար այրին աղոթում է։  
Իշխանը եկավ և ասաց.

— Ես քեզ բարիք չեմ արել, ով կին,  
զու ինձ համար ինչնել ես աղոթում։

Այրի կինն ասաց.

— Քո հայրը վաս մարդ էք. ես անի-  
ծեցի, և նա մեռավ. Թու նստեցիք նրա  
տեղը՝ ավելի խիստ չար. Այժմ վախենում  
եմ, որ մեռնես և քո որդին քեզնից ավելի  
չար լինի:



### ԻՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՎՈՐԸ

Մ իմաստուն զինվոր պատերազմ էք  
գնում. նա երկու ոտքով կաղ էք. Զինվոր-  
ներից մեկը նրան ասաց. «Ո՞վ ողորմելի,  
մեր ես գնում: Քեզ իսկույն կապանեն,  
որովհետեւ վախչել չես կարող» Իսկ նա  
ասաց. «Ո՞վ անմիտ, ես չեմ գնում պա-  
տերազմ՝ վախչելու, այլ կանգնելու, կռվե-  
րու և հաղթելու»:





## ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՅԱԿ 029

— Այս մի թագավոր և ուներ մի սիրելի օձ, որն ամեն օր նրան ըերտ էր մի կարմիր դահեկան, թագավորն ունեցավ մի մանուկ, որին սննդում էր դահի վրա։ Նա օձը նետում էր մանկան սպարանցով, և օձն ու մանուկը այդպես խաղում էին։ Երբ մանուկը մեծացավ, մի անգամ խաղի ժամանակ սուրբ հանեց, կտրեց օձի պոչը և գետին դցեց։ Օձը դայրացավ, խայթեց

մանուկին, և մանուկն խսկույն մեռավ։ Օձը գնաց օտար երկիր։ Երբ թագավորը եկավ ու տեսավ մանուկին օձի թույնից սեացում ու մեռած, օձի պոչը զետնին ընեկած, խմացավ, որ իր մանուկն է թրով կտրել օձի պոչը։ Նա սգաց որդուն, տարավ թաղեց զերեզմանում։

Անցավ մի առ ժամանակ, և թագավորը խնդրաբիուներ ուղարկեց այն օձի մատ և ասաց.

— Գիտեմ, որ առաջ իմ որդին է ծռություն արել։ Նա կտրել է քո պոչը, ապա դու կծել ես նրան։ Ինչ որ եղավ՝ եղավ, և իդուր գնացիր։ Արի, և մենք առաջան կտրենք իրար ու միասին կառլինք։

Իսկ օձը պատասխան տվեց և ասաց.

— Այդպես չէ։ Քանի որ ես պիտի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու քո՞ որդու զե-

ըեզմանին, ուրեմն մեր միջից՝ թշնամությունը չի վերանա: Լավի այն է, որ դուք ես իրարից հեռանանք, որպեսզի ուրիշ մեծ չարիքներ չծնվեն մեր մեջ:



### ԱՌՅՈՒԹԸ, ԱՂՎԵՄՆ ՐԱ Ա.ԲԶԲ

**Ա** ՌՅՈՒԹԸ հիվանդացառ, կբոլոր կենացան իները եկան նրան տեսության. միայն աղվեսն ուշացավ: Արջ չարախնոսեց նրան, իսկ աղվեսը գոան ետևից լսեց և ներս ընկնելով, թավալպեց առյուծի առաջ: Առյուծն ասաց աղվեսին. «Թարի ժամի չեկար, գարշելի: ասա ինձ, ինչո՞ւ ուշացար»: Աղվեսն ասաց. «Մի բարեկանար, բարի թագավոր, երդվում եմ քո պլիսով, որ քո առողջության համար այցելեցի շատ բժիշ-

կտագետների և մեծ շարշարանք քաշեցի, բայց  
խմացա դեղը քո բժշկության»։ Եվ առյուծն  
ասաց. «Տարի եկար, խմաստուն կենդանի,  
ինչն է այդ դեղը»։

Ազգեան տսաց. «Խիստ պիտանի է և դյու-  
րին. բժշկագետներն ասացին, թե կենդա-  
նի հանեք արջի մորթին և տաք-տաք գցեք  
առյուծի վրա, մորթին խսկույն ցավը կըհա-  
նի հիվանդից»։ Առյուծը հրամայեց, բանե-  
ցին արջին և սկսեցին մորթին հանելու իսկ  
նու վայում էր և ուժեղ սռնոց արձակում։

Ազգեան տսաց. «Այդ ամենը քեզ և նըան,  
ով արքունիք մտնելով կչարախսուի մեկին»։




### ՄԻ ԿՈԹ ՄԵՎԵԾԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌ

**Մ**ի մտրդ խանութ ուներ և մեղք էր  
ծախում. Մեղքից մի կաթ կաթեց զետ-  
նին և մի ոլիճակ նստեց կաթի վրա։ Կա-  
տուն վաղեց և ոլիճակին առավու նրանից  
հետո շանը վաղեց և կատվին առավու թա-  
նութիւ տերը շանը զարկեց և սպանեց։

Այդ զյուղին դրացի մի զյուղ կար, և  
շանն այն զյուղից էր երբ շան տերն  
խմացավ, թե խանութպանն սպանել է իր

շանը, այն ժամանակ եկավ և սպանեց իսա-  
նութպանին Նետո երկու կողմից վեր կա-  
ցան գյուղացիք և միմյանց հետ մեծ պա-  
տերազմ արին: Նրանց մեջ կոտորած եղավ,  
և երկու կողմից կենդանի մնաց մի մարդ՝  
մի կաթ մեղքի համար:



#### ԿԾԱԿ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ

**Մ**ի իմաստուն և աղքատ մարդ ու-  
ներ ծույլ որդիներ: Մահվան ժամին նա  
կանչեց որդիներին և ասաց.

— Ով զավակներ, իմ նախնիները շատ  
զանձ են թողել մեր այգում, բայց ես ձեզ  
ցույց չեմ տա նրա տեղը, Այդ գանձը կդտնի  
նա, ով շատ աշխատի և խոր փորի:

Հոր մահից հետո որդիներն սկսեցին աշ-  
խատել մեծ եռանդով և խորն էին փո-

բում, որովհեակ յուրաքանչյուրն աշխատառ  
տում էր, որ ինքը գանի զանձը:

Այդին սկսեց աճել ու զորանալ, տոտարերք տվեց և նրանց հարստացրեց զանձերով:



ՈՒՂՏԸ, ԳՈՅՆՆ ՈՒ ԱԳԱԽՄԻ

ՈՒՂՏԸ, դայլն ու աղվեսը եղբայրացան և ճանապարհ ընկան: Ճանապարհին դուան մի թլիթ հաց և մինյանց տատցին, թե ով ավագ է, թող նա ուտի: Եվ սկսեցին աճել իրենց տարիքը: Աղվեսն ասաց.

— Ես այն աղվեսն եմ, որի անունը Աղամը դրեց:

Գայլն ասաց:

— Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ:

Ուզողը տեսնելով, որ նրանք իրենից  
ավագ դուրս եկան և հացը պիտի ուտեն,  
հացը բերանն առավ և բարձրացնելով ա-  
սաց.

— Միթե ես երեկվա տղան եմ, որ այս-  
չափ մեծացրել եմ իմ սըռւնքները:

Եվ սկսեց հացն ուտել Իսկ աղվեսը և  
դայլը ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկա-  
րողացան անել և փախան:



Տիգրան  
Արքա  
Տիգրան

Առակներ - 7



ԹԻԳՐԱՆԵՐԻ ԹԱԴԱՎՈՐ ԿՈՌԵՆԿԸ  
ԵՎ, ԷՇԲ

ԱՎԱՋՎԱՆԵՑԻ թռչունները և ասա-  
ցին, թե ում ձայնը զորավոր է, նրան  
մեզ թագավոր գնենք, որպեսզի պատե-  
րազմի ժամին կանչի մեջ:

Կոռոնկը երկինք բարձրացավ և զոչեց.  
Նրան հավանեցին թռչունները և օճեցին  
թագավոր:

Եղբ եկավ և ասաց.

— Այ, եթե ինձ ստի տեղ անեիք, որ  
նրա փոխարեն ես բարձրանայի, դուք կը-  
լսեիք, թե ում ձայնն է զորավոր:



ԵԶԲ ԵԱ ԶԻՆ 2 Փ


**ԵԶԸ** և ձին խռուցին իրար հետո եզն  
ասաց.

— Դու ժվ ես, կամ ի՞նչի պետք ես  
Զին ասաց.

— Ես ձին եմ, ինձ թաղավորները, իշ-  
խանները և պարսնները զարգարում են  
սոկով և արծաթով ու բազմում են ինձ վրա:  
Եզն ասաց.

— Ամբողջ աշխարհի բարեկեցությունն  
եմ ես, որովհետեւ ես եմ վաստակում, չար-

շարվում և հոգնում, իսկ դու և քո թաշավորն ուտում եք, Բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը. Եթե չվաստակեմ, դու և քո թաշավորն իսկույն կմեռնեք: Եվ դու երախտաճոռ մի լինիր:



## ՀԻՄԱՐԸ ԵՎ ԶՄԵՐՈՒԿԸ

**Մ**ի հիմար և միամիտ մարդ ուներ մի գահեկան: Առնելով զահեկանը նա զնաց քաղաք մի էշ գնելու: Երջեց քաղաքում և շուկայում, մի գահեկանի էշ չփառվ, նորից եկավ շուկա, տեսավ մի մեծ ձմերուկ և հիացած հարցըեց.

— Այս ի՞նչ է:

Պաճառականներն իմացան, որ նա հիմար է և ասացին, թե ճնդու էշի ձու է և կճանի ճնդու մեծ էշ: Մարդը ուրախանա-

լով տվեց դահեկանը և առուվ հնդու էշի  
ձուն։ Կաճառականները նրան պատվիրե-  
ցին, թե ձեռքիդ զգույշ տար, թե չե-  
կկոտրվի և էշը միջից կփախչի։ Մարդը  
ձմերուկը ձեռքին սկսեց գնալ զառի-  
վայր ճանապարհով, ոտքը սայթաքեց,  
ձմերուկը ձեռքից գուրս պրծավ և գլոր-  
վեց խիտ անտառի մեջ։ Ծնոտառից մինա-  
պատակ վագեց և սկսեց փախչել, խկ-  
մարդը կարծեց, թե ձուն կոտրվել է և ահա  
էշը գուրս է եկել ու փախչում է։ Նա  
ետեից վազելով կանչում էր նապաստակին  
ու ձայն տալիս.

— Այ հնդու էշ, վայ ինձ, մի փախչիր.  
քուո՞ի, քուո՞ի, խնայիր ինձ և վերադար-  
ձիր։



### ✓ ՀՀ ՊՈՅԻ ԾԱՎԱՅՑ

**Ե**ՐԻՆ ավետիս տղին՝ թե ցնծա, ու-  
րախ եղիր ու մեծ ընծա պարզիիր, որով-  
հետեւ քեղ թռու ծնվեց։

Եվ էշն ասաց.

Վայ ինձ, բարեկոմներ. Եթե հարյուր  
թռու էլ ծնվի, իմ մեջքի բեռան ծանրությու-  
նը չեն թեթևացնի։





## ԱՎԱՅԱՑԻ ՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԻ

Ա պղատ զյուզ եկալ ու մատի  
զյուզի եկեղեցին, որ խարխուլ էր և անձրեխ  
ժամանակ կաթում էր։ Աղքատը անձրեխց  
թրջիւ էր և առ քաղցած էր, հագել էր սկա-  
ռառուսուն պղես, զսղում էր, հոգնել էր  
ճանապարհց։ Եերս մատի քահանան,  
սկսեց ժամ առել։ Սուալ ավետարանը և  
կարդաց այն էջը ուր զրված էր, թե օ-  
տարական էին ընդունեցիք ինձ, մերկ էին  
հաղցրիք ինձ, քաղցած էին կերակըցիք

ինձ, ծարավ էին հաղցրիք ինձ։ Աղքատը  
լսեց և ուրախացավ. «Այս ինձ համար է  
տագած, շուտով կկատարեն իմ կամքը։  
Քահանան ժամն արձակեց ու գնաց տուն,  
աղքատին թողից եկեղեցու մեջ հնագ չտա-  
րավ նրա մասին։ Աղքատը մասձեց. «Այն  
զիբը, որ կարդաց, սուտ էր»։ Սուալ ավե-  
տարանը, զրան քար դրեց և սուզեց ջրի  
մեջ։ Քահանան եկեղեցին գալով, ավետա-  
րանը չտառավ և ադրատին ասաց.

— Ուր է ավետարանը։

Աղքատն սուց քահանացին։

— Ի՞նչ ես անում սուտ ավետարանը,  
և տարս ջուրը զցեցին։

Քահանան բարձրանարավ սկսեց ծեծել աղ-  
քատին։ Աղքատն ասաց.

— Ի՞նչու ես ծեծում ինձ, անիբանվ, եթե  
հավատում ես, թե ավետարանն աստծու  
ձշմարխու խոսքն է, ասու ինչու չես կր-  
տարաւմ նրա կամքը։ Որովհեակ ես օստ-  
րական եմ, և ինձ չեք ընդունում, մերկ

եմ, և ինձ չեք հազցնում, քաղցած եմ՝  
չեք կերտկրում, ծարավ եմ ջուր չեք տու-  
լիս: Միթե աստված այդ բաների պակա-  
ռությունն ուներ և այդ ամենն իր համար  
ասաց:



### ✓ ՀԱՅՐԵ ՈՒ ԱՐԴԻՒՆ

**Մ**արդ աղջիկ ուզեց որդու հա-  
մար, և որդին ամուսնացավ աղջկա հետ:  
Երբ միավորվեց նրա հետ, շատ հիացավ  
ամուսնության համար, ուրախացավ և  
սկսեց հարը խրառել ամուսնության առթիվ:

Հայրն ասաց. «Ո՛վ որդյակ, ես ամուս-  
նությամբ ծնեցի քեզ, և ոյժմ գնւ ես  
խրառում ինձ»:





## ԱՐԱՐԱՏ. ԸՆԿԱԽՅՈՅ ԵՎ. ԶԵՅՐԻՆՅԱ


Յ ու մորդ բնիկոյիցի ծառի տակ ձմերուկ էք ցուներ: Պատուիի ժամանակ եկամ, տեսավ մեծամեծ ձմերուկները, նայեց ծառովն, տեսավ, որ բնիկուրը մանր էր: Մարգն տառց:

— Տեր ասամած, ինչ որ ստեղծել ես՝ ամենը կարգին է և ու մէ բանի նման: Իսկ ոյս երկու պատուի անկարդ են և բանի նման չեն:

Մարգն առաջ էր, որ բնիկոյիցի տեղ

ձմերուկ պիտի լիներ ծառին և ընկույզը ձմերուկի թփի վրա: Նա պատկեց ծառի տակ, նայեց ծառին: Հանկարծ մի ընկույզը պակից ծառից, բնիկով նրա ճակաալն, ճակաալ պատուեց և արյուն ելավ: Մարգը վեր կացավ աեղից և ազաղակեց:

— Տեր ասամած, ինչ որ ստեղծել ես, ամենը կարգին է ու կառարյալ և ով չհաշվանի քո ստեղծածք, նրա ճակաալ թող խմից վաս լինի, որովհետեւ եթե բնիկույզի տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ:





## ԵԿԵՊԵՑԻՆ ԵՎ ԶՐԱԳԱՅՔ

**Ե**ԿԵՊԵՑԻՆ պարծեցակ իր սըբությամբ և ասաց.

— Ես ասածու տաճարն եմ. քահանաներն ու ժողովուրդը գեղի ինձ են գալիս աստծուն աղոթելու և պատարագ մատուցելու. Ասուված հաշովում է աշխարհի հետ և մեղքերին թողությունն է լինում:

Այն ժամանակ ջրաղացն ասաց Եկեղեցուն:

— Ինչ որ դու ասում ես, արդար է և

ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի մոռանա, որ զիշեր-ցերեկ աշխատում եմ և դատում այն, ինչ որ ուտում են քահանաներն ու ժողովուրդը, և ասա քեզ են զալիս աղոթելու և երկրպագելու աստծուն:





## ԱՄԵՆԱՏԳԵՏ ՄՈՒԴԻԲ

Որ թագավոր կամեցավ աշտարակ շիներ Աշտարակը քանի ցերեկը շինում էին, զիշերը փուլ էր զալիս և ամառից իր դիատուններին ու պատճառը հարցրեց նրանք ասացին.

— Եթե կամենում ես, որ այս չփլչի, գալիք մի տղետ մարդ, որից ավելի տղետ մարդ չինի, և նրան կհնդանի գիր պատի մեջ, ու պատը թող շարեն. այլս չի փլչի.

Թագավորն ասաց.

— Այդ բանի ընտրություննը ևս՝ գուք արեք. գտեք մի տղետ մարդ, որին կենացնի թաղեն պատի մեջ:

Դիտունները նստեցին միասին որոշելու, թե որտեղ կարող են գտնել տղետ մարդ։ Մեկն ասաց.

— Զկնորսն է տղետ, քանի որ նրա առն ու տալը մարդու հետ չի, այլ ջրի և ձկների։

Իսկ ոմանք ասացին.

— Իշապանը, որ էշի հետ է լինում և իր ողջ կյանքն անց է կացնում դրաստի հետ, արջերով լիռ ու անտառ։

Ոմանք ծովարարին ասացին, իսկ ոմանք հովին, որ ամառ-ձմեռ ոչխարների հետ շրջում է լեռներում, չի մտնում դյուզ կամ քաղաք։ Հավանություն ավին և կամեցան հովին բերելու։

Այն ժամանակ դիտուններից մեկն ասաց.

— Մեր թագավորը մի հովիկ ունի, որ ծնվել է սարում ոչխարների մեջ, սնվել է

այնտեղ և իր կյանքում ոչ զյուղ է մտել, ոչ  
քաղաք:

Աւզարկեցին ասոր ձիավոր, որպեսզի  
մարդուն բերեն: Չիտպորները զնացին գտան  
հովզին, որ կթում էր ոչխարը, և ողջունե-  
րավ ասացին.

— Թագավորը քեզ կանչում է:  
Հովիվն ասաց.

— Ես իմ կյանքում ոչ քաղաք եմ զնա-  
ցել և ոչ գյուղ. ինձ ինչու է կանչում:

Իսկ նրանք խորամանկությամբ ասու-  
ցին. «Չենք իմանում»: Հովիվը պատվեց  
նրանց, զառ մորթեց, պանիր բերեց, ու-  
րախացրեց նրանց և երգմանը հարցրեց  
կանչելու պատճառը: Նրանք ասացին, թե  
այս պատճառով է քեզ կանչում, որովհետեւ  
թագավորի գիտուններն ասել են, որ մի  
տգետ մարդու պետք է զնել պատի մեջ,  
որպեսզի պատը շեն մնա:

Այս ժամանակ հովիվը ծիծաղեց և ասաց.  
— Հիմորը և տգետն այն գիտուններն

են, որ այդպիսի ընարություն են արել:  
Նա մի ոչխար բերելով ասաց.

— Ես ձեզ ցույց կտամ իմ տղիառու-  
թյունը:

Եվ ասաց.

— Այս ոչխարը երկու զառ ունի փորում,  
մինը էզ է, մյուսը՝ որձ. մեկի զլուխը սի  
է, մյուսինը՝ սպիտակը:

Աչխարը մորթեց ու զառները փորեց  
հանեց, այնպես էր, ինչպես ասաց:

Մի այլ ոչխար բերելով, ասաց.

Այս ոչխարը մեկ զառ ունի փորում.  
մարմինը սի է, զլուխն սպիտակ, ինքը որձ:

Մորթեցին, տհատն այնպես է: Հովիվը  
ասաց.

— Ոչխարի այս երկու համը, որ կա ձեր  
տուած, ամեն մեկին զիտեմ, թե որն է  
ծնելու, որն է սահերծ, որն է որձ ծնելու,  
որը էզ, որը սի կամ սպիտակ և որը սի ու  
սպիտակ պաւուերով: Չեր գիտունները կո-  
րո՞ղ են այդ իմանար

Զիավորներն ասացին.

— Աչ ամեննին!

Հովիվ ասաց.


— Աւքեմն իմացեք, որ ես չեմ այն հիմարը և տգետը, որին դուք փնտրում եք: Իսկ եթե կամենաք, ես ցույց կտամ տգետ մարդուն: Թագավորը թող իր նայիպին բռնի, թալանի և ինչ ունի՝ բոլորն առնի ու քաղաքի հրապարակում նրան կախի, չարաշար տանջի, որպեսզի բոլոր քաղաքացիները տեսնեն. ապա նայիպին թող տանեն թաքցնեն և ասեն, թե նրան սպանեցին: Երեք որ քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ որ գա և հանձն առնի նայիպի գործը, նրա բոլոր ապրանքն այդ մարդուն կտանք և նրան կնշանակենք թագավորի նայիպ: Այն մարդը, որ կտեսնի այդ խաղը, կլոի, ինչ որ արին նայիպի գլխին և առաջանալով կասի, թե ես ուզում եմ լինել նայիպ, այդ մարդը և հիմար է, և տգետ, նրան բռնեցեք և կեն-

դանի դրեք պատի մեջ, որպեսզի այլիս պատը չփլչի և շեն մնա:

Նրանք եկան և թագավորին պատճեցին: Թագավորն արեց այնպես, ինչպես հովիվն ասել էր: Մինչդեռ քաղաքում կանչում էին, թե ով գա և հանձն առնի նայիպի գործն ու իշխանությունը, նա կստանա նրա ապրանքն ու հողը, մոտ վազեց մի անձարակ ու տիժար մարդ և ասաց, թե ես հանձն կառնեմ այդ գործը: Նրան հարցրին, թե տեսամբ ինչ արին նայիպի գլխին, նա ասաց.


— Այս, տեսա,

Իսկույն առան նրան ու տարան, կենդանի դըին պատի մեջ, և պատը հաստատուն մնաց:





— Տեր ասոված, փառք քեզ, որ սրա  
ուզածն այս է, իսկ ես կարծում էի, թե  
ինձ ուզում է նշանակել մեր գալառի հա-  
վարած կամ թռչնոցի վանահայր:



## ԱՊՎԵՍՆ ՈՒ ՈՐՍՈՐԴԻԸ

**ՈՐՍՈՐԴԸ** շներով ճետապնդում ու  
նեղում էր աղվեսին:

Աղվեսը դարձավ և ասաց.

— Աղաչում եմ քեզ, ասա, թե ինչու  
համար ես ինձ նեղում:

Որսորդն ասաց.

— Որպեսզի հանեմ քո մորթին:

Աղվեսը կանգնեց և ասաց.



## ԻՇԽԱՆԱՎԱՐՐՈՅ, ԵՎ, ԻՄԱՍՏՈՒՆԸ

ԱՅԻ մի աշխարհակալ իշխանավոր,  
Նա ուներ մի շատ գեղեցիկ տղաւ Իշխա-  
նավորն ասաց, թե գեղեցիկ աղջիկ կառ-  
նեմ, որ կին լինի իմ որդուն՝ իմ գահը  
ժառանգող գեղեցիկ թոռներ ունենամ:  
Գնաց բերեց մի գեղեցիկ հարս, և գեռ թոռ  
չէր ունեցել, երբ որդին մեռավ ու հարսը  
մնաց: Նա ինքը կամեցավ հարսին առնել և  
հարցըց իմաստուններին, թե կա իրա-  
վունք: Նրանք ասացին, թե իրավունք

չկա, որ հայրը հարսին առնի: Նա չկամե-  
ցավ լսել նրանց, գտավ մի այլ իմաստուն,  
որ նրա սիրելին էր, և այդ իմաստունն  
ասաց իշխանավորին.

— Աշխարհում յոթանսուներկու ազգ  
կա, և նրանցից ոչ մեկին չի հասնում, իսկ  
քեզ կհասնի:

Եվ իմաստունն ասաց.

— Վախենում եմ պատճառն ամել, որով-  
հետեւ կսպանես ինձ:

Նա երդվեց չպատժել նրան, եթե պատ-  
ճառն ասի:

Այն ժամանակ իմաստունն ասաց.

— Որովհետեւ գու ամեն ազգից գուրս  
ես, քեզ վրա իշխանություն չկա, ինչ կա-  
մենաս՝ կարող ես անել:



## ԱՐԴՅՈՒՆ ԵՎ ԹՊԹԱՏՈՒՐ ԳՈՅՆԸ

**Ա**ՐԴՅՈՒՆ մի գրած թուղթ կտավ,  
տարագ զայլին ու ասաց.

— Այսքան ժամանակ աշխատեցի, բարեխոս մարդիկ մեջ գցեցի և իշխանից քեզ  
համար թուղթ հանեցի, մի ոչխար պիտի  
տա քեզ! Եվ ոչ շուն, ոչ մարդ քեզ չպիտի  
նեղեն:

Այդպես խարեց զայլին և միասին գնացին մի զյուղ: Ազգեաը նստեց բլուրի վրա  
և թուղթը տղեց զայլին: Երբ զայլը դյուդ

մտավ, վրա թափվեցին շներն ու մարդիկ  
և նրան գցեցին ու գանահարեցին: Արյունաթաթախ զայլը հազիվ ազատվելով հասավ աղվեսին Ազգեան ասաց.


— Ինչո՞ւ թուղթը ցույց չտվիր:  
Գայլն ասաց.  
— Ճույց տվի, բայց գյուղում հազար  
շուն կար, որ դիր չգիտեր:





ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՎ ԽՈՐԹ ՈՐԴԻՆ

Այրի կին ուներ մի կով, իսկ նրա խորթ որդին ուներ մի էշ, Խորթ որդին գողանում էր կովի կերը, տալիս էշին. Այրի կինն աստծուն աղաչեց, որ աստված էշին մեռցնի: Բայց կովը մեռավ, և այրին լաց եղավ ու ասաց. «Ո՞վ աստված, միթե չկարողացար էշը կովից տարբերել»:



ՀԱԼՈԼ ՄԱՐԴԸ

— Ար երիտասարդ ուխտել էր հարած բան ամենեին չուտելի Մի օր նա գնաց գետի ափը և տեսավ, որ ջուրը մի խնձոր է բերում: Երիտասարդն տռավ խնձորը և կերավ անոթի: Ապա միտն ընկավ իր ուխտը, գնաց գետն ի վեր, զտավ մի այգի և իմացավ, որ խնձորն այդ այգուց էր: Երիտասարդն ասաց այգետիրոջը.

— Ողորմիր ինձ և առ խնձորի գինը կամ հալալ արա, որովհետեւ ես հարած բան ամենեին չեմ կերել:

Բուբաստանի տերն ասաց.

— Կեսը, որ իմն է, հալալ քեզ, խակ  
կեսը իմ եղբորն է, նրան տեր չեմ: Իմ  
եղբայրը հեռու է այսաեղից վեց օրվա  
ճանապարհ:

Երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ  
այն մարդուն, ասաց.

— Կամ առ քեզ կես խնձորի գինը և կամ  
հալալ արա ինձ:

Մարդն ասաց.

— Ոչ զինը կառնեմ և ոչ հալալ կանեմ:  
Թե կուզես, որ հալալ անեմ, ես մի աղջիկ  
ունեմ, որ ոչ ականջ ունի, ոչ լեզու, ոչ  
ձեռք և ոչ ոտք. Նրան քեզ կին առ, որ  
հալալ անեմ:

Երիտասարդն անճարացած առավ այդ  
աղջկան: Երբ տռագասատ մտան, տեսավ որ  
աղջիկը բոլորովին առողջ էր: Երիտասարդն  
աներոջն ասաց, թե ինչո՞ւ էիր ծաղրում քո  
աղջկան: Եվ նա ասաց.

— Ես ճշմարիտ էի, որովհետեւ ծնված

օրից իմ աղջիկն արեղակի լույսը երդից է  
տեսել, օտար մարդու ձայն չի լսել, օտարի  
հետ չի խսուել, ձեռքով մեղք չի շոշափել  
և ոտքը գոնից գուրս չի դրել: Ես քեզ  
նման հալալ մարդ էի ուզում, և ահա զու  
եկար:





## ԱՌՅՈՒԹՆ ՈՒ ՄԱՐԴԸ

**Ս**Ե զորավոր առյուծ նստել էր ճանապարհին, և տեսակ-տեսակ գաղաններ այդ ճանապարհով դալիս էին գողարով ու անցնում։ Առյուծը հարցրեց նրանց.

— Ի՞նչո՞ւ եք փախչում և ում ահից եք զարհուրած փախչում։

**Նրանք ասացին.**

— Փախիր և դու, որովհետեւ ահա դալիս է մարդը։

**Առյուծն ասաց.**

— Ի՞վ է մարդը, ի՞նչ է նա, ի՞նչ է նրա ուժը և նրա կերպարանքը, որ փախչում էք նրանից։

**Նրանք ասացին.**

— Կդա, կտեսնի շեզ և քեզ վայ կլինի։ Եվ անա իր հանդից եկավ մի հողագործ մարդ։ Առյուծն ասաց.

— Միթե գու ես այն մարդը, որ փախչընում է զաղաններին։

**Նա ասաց.**

— Այս, ես եմ։

**Առյուծն ասաց.**

— Արի կռվենք։

**Մարդն ասաց.**

— Այս, բայց քո գենքերը քեզ հետ ենց խոկ իմը տանն են։ Եկ նախ կապեմ քեզ, որպեսզի չփախչես, մինչեւ ես գնամ, առնեմ իմ գենքը, և առա կռվենք։

**Առյուծն ասաց.**


— Երդիքիր որ կզաս, և ես կլսեմ քեզ։ Մարդը երդվեց, և առյուծն ասաց.

— Հիմա կապիր ինձ և գնա շուտ ո  
դարձիր:

Մարդը հանեց սրաբանը և առյուծին պինդ  
կապով կապեց կաղնու ծառին, ծառից  
կտրեց մի բիր և սկսեց գարկել առյուծին:

Առյուծը զոչեց.

— Եթե զու մարդ ես, ավելի խիստ և  
անխնա զարդի իմ կողերին, որովհետեւ այս  
խելքին այդպես է վայել:



**Մ**ը մուկ հպարտացավ, Կորավ նրա  
իմաստությունը և նրա սիրաը լցվեց հը-  
պարտությամբ։ Մուկը գնաց ուղար մոտ  
և սսաց ուղտին։

— Ինձ հրաման տուր քո կճպակի մեջ  
բուն գնեմ և այնուեղ բնակվեմ։

Ուղոն սսաց։

— Թեզ վնաս կլինի, որովհետեւ հանկարծ  
կոխ կտամ քեզ և կմեռնես։

Մուկն սսաց։

— Քո ամբակը կակուղ է և ինձ վեաս  
չի լինին  
Աւզոն ասաց.

— Քո արյունը քո գլուխը:  
Եվ մուկն ուզտի կծղակի մեջ շինեց իր  
բունը. Մի անգամ ուզտը ծանր բեռան  
տակ քայլեց և հանկարծակի կոխ ավեց  
մուկին. Մուկը ճշաց և նրա փորից դուրս  
եկավ ճրադռն, որովհետեւ մուկը զեր էր։  
Այդ տեսնելով ուզտն ասաց.

— Ահա եղբայր, հենց այդ էր նեղում  
քեզ, որ դուքս ելավ քո փորից։



### ԳՅՈՒՂ, ԱՎԱԾՍՆ ՈՒ ԶՈՐԻՆ

ՊՅՈՒՂ, աղվեսն ու ջորին եղբայրացան ու դնացին։ Երբ սովածացան և որսի չհանդիպեցին, ասացին.

— Եկեք ուտենք նրան, ով տարիքով փոքր է։

Այսպես ասացին գայլը և աղվեսը, որովհետեւ կամենում էին ջորուն ուտել Գայլին հարցրին, թե որ տարվա գայլն ես։ Նա ասաց, թե ես այն գայլն եմ, որին նոյը տապանն առավ։

Աղվեսն առաջ եկավ և ասաց.

— Օ՛, դու առաը ազգով ինձանից փոքր  
ես. ես այն աղվեսն եմ, որին աստված  
սուեղծեց:

Զորին եկավ և ասաց.

— Իմ ծննդյան թվականը գրված է  
սմբակիս վրա, եկեք կարդացեք և տեսեք՝  
քանի տարեկան եմ:

Նա ոտքը բարձրացրեց: Աղվեսն ասաց  
գայլին.

— Գիտեմ, որ դու զպրոցում եղել ես,  
արի գիրը կարդա:


Գայլը հավատաց և գնաց կարդալու:  
Զորին ասաց,

— Առաջ արի, որովհետեւ գիրս մանր է:  
Նա առաջ գնաց, և ջորին սաստիկ ու-  
ժով զարկեց գայլի ճակատին ու ջախջա-  
խեց: Գայլը գնաց կողկոնձալով: Աղվեսն  
ասաց գայլին:

— Արի, մի առղ էլ կա, այն էլ կարդա:  
Գայլն ասաց.

— Ես ինչ գիտեի գիրը. մենք աղվե  
ազգ մասզով ենք և մսագործի որդի:





## ԳՈՐԾ ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ԱՅԻ ԿԻՆԸ

**Մ**ի քահանա գողացավ այրի կնոջ  
կովը և կապեց ախոռում, կինն իմացավ և  
քահանային ասաց.


— Տեր հայր, հասավ իմ մահվան ժամը,  
գնանք ախոռ, որ խոստովանեմ մեղքերս:

Այն ժամանակ քահանան կովը տարավ  
ներսի տուն, այնտեղից ժամատուն և այն-  
տեղից եկեղեցին կինն ասաց.

— Տեր հայր, վերջին խոստովանությու-  
նը մահից առաջ պետք է անել եկեղեցում:

Քահանան կովը քեզ բարձրացրեց և վա-  
րագույրը քաշեց նրա վրա: Երբ նրանք  
մատան եկեղեցի ու նստեցին, կինը բարձ-  
րացրեց վարագույրը և ասաց կովին.

— Ով գարշելի, ես քեզ կով գիտեի,  
այժմ քեզ ով արեց պատարագիչ, առա ինձ,





## ԴՐԱԽՏԸ ԵՎ ԳԵՂՉՈՒԿ ՄԱՐԶԸ

Ա ն գեղջուկ մարդ աղը շալակին  
բարձրանում էր գժվար սարով։ Տոթ ժա-  
մանակ էր։ Շատ հոգնեց մարդը և բեռք  
վայր գնելով սկսեց բամբասել Ազամին և  
եվային, թե ինչու նրանք անհամբերու-  
թյամբ դուրս եկան դրախտից։ Իսկույն  
երեաց հրեշտակը և նրան ասաց։

— Եթե քեզ դրախտ տանեմ, դու կհամ-  
բերես։

Գեղջուկն ասաց։

Երբ կլինի այդ։  
Հանկարծ քունն իջավ նրա վրա և տե-  
սավ, որ դրախտն է ընկել. շատ ուրախա-  
ցավ։ Ապա տեսավ, որ դրախտի մեջ մար-  
դիկ կտրատում են գեռաբույս ծառերը և  
չհամբերելով ասաց։

— Այդ ի՞նչ մարդիկ եք, որ չոր ծա-  
ռերը թողած, կտրատում եք կանաչ ծա-  
ռերը։

Աչքերը բաց արեց, տեսավ, որ դարձ-  
յալ նստել է աղի բեռան մոտ, և սկսեց  
դառն արտասվել։ Գեղջուկը նորից տեսավ  
հրեշտակին և ասաց։

— Այլևս չեմ խոսի։


Նա նորից դրախտ ընկավ և տեսավ, որ  
մարդիկ կտրած ճյուղերը և փայտը շալակ  
են կապել և չեն կարողանում շալակել,  
բայց գեռ դարսում են ճյուղ և փայտ։  
Չհամբերեց և ասաց։

— Ով անխելքներ, թեթևացրեք ձեր  
բեռը, որ կարողանաք շալակել

Գեղջուկը նորից գարթնեց դժվար սարի  
վրա և սկսեց արտասվեր. Հրեշտակը եր-  
րորդ անգամ նրան դրախտ տարավ. Նա  
տեսավ մի մեծ քար, որից կապել էին  
տասներկու լուծ եղ. ամեն մեկն իր կողմն  
էր քաշում, բայց քարը չէր շարժվում։  
Մարդը դարձյալ չհամբերեց և կանչեց.

— Ով հիմարներ, մի կողմի վրա քաշեք  
և միասին քաշեք, որ քարը տեղից շարժեք։  
Զարթնելով գեղջուկ մարդն ասաց.

— Լավ է ես իմ աղը շալակեմ։ Եվ  
բարձրացավ դժվար սարով։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

Առակներ	5
---------	---

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ	
Գարու հաշիվ	61
Այրի կինը և իր օրդին	63
Միայնակյացն ու գամփու շունը	65
Այծեր և գայլեր	67
Երկու նկարիչ	70
Առյուծն ու աղվեսը	72
Իմաստուն զատավորը	74
Առյուծը, գայլը և աղվեսը	76
Գինի	78
Միամիտ զողերը	81
Իշխանը և այրի կինը	83
Իմաստուն զինվորը	85
Թագավորն ու օձը	86
Առյուծը, աղվեսն ու արջը	89
Մի կաթ մեղրը պատերազմի պատճառ	91
Կոտակ գանձի, մասին	93
Աւղավը, գայլն ու աղվեսը	95
Թռչունների թագավոր կռունկը և էշը	97

<b>Եղբ և ձին</b>	99
Հիմարը և ձմերուկը	101
Էշին թռու ծնվեց	103
<b>Աղքատն ու ավետարանը</b>	104
Հայրն ու որդին	107
Մարզը, ընկույզը և ձմերուկը	108
Եկեղեցին և ջրադաշը	110
Ամենատգետ մարդը	112
Աղվան ու որսորդը	118
<b>Իշխանավորը և իժմասունը</b>	120
Աղվանը և թղթատար գայլը	122
<b>Այրի կինը և խորթ որդին</b>	124
Հալալ մարդը	125
<b>Ապայւծն ու մարդը</b>	128
Մուկը և ուղարք	131
Գայլը, աղվան ու ջորին	133
<b>Գող քահանան և այրի կինը</b>	136
Գրախառը և գեղջուկ մարդը	138

Խմբագիր՝ Խ. Հրաչյան  
Տեխն. խմբագիր՝ Պ. Ստեփանյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Կոստանդյան

ՎՃ 04522 դրամ. 495, տիրամ. 10000

Հանձնվել է արտադրության 1951 թ. հունիսի 1-ին  
Ստորագրված է ապագրության 1951 թ. սեպտեմբերի 13-ին  
41/2 տար, ժամուկ, 1,2 հետ. մամուլ, 1,5 հըտա. ժամուկ,  
Գինը՝ 3 ու 60 կուգ.

Հայոցի իշխանական մարդության № 1 ապագան,  
Երևան, Ալավերդյանի փող. № 65